ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 220

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Երասխահուն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Մեծամոր համայնքի (Երասխահուն բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Երասխահուն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-040-0103-0048 կադաստրային ծածկագրով 7.9058 հա մակերեսով, 04-040-0105-0009 կադաստրային ծածկագրով 4.8733 հա մակերեսով և 04-040-0203-0010 կադաստրային ծածկագրով 7.7398 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքեր	04-040-0103-0048 կադաստրային ծածկագրով 7.9058 հա մակերեսով, 04-040-0105-0009 կադաստրային ծածկագրով 4.8733 հա մակերեսով և 04-040-0203-0010 կադաստրային ծածկագրով 7.7398 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երասխահուն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, «10» «հունիսի» 2025 թ.